ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

<< Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի (շարունակություն)

ք. Երևան **_15_ _հունիսի_ _2018թ._**
ժամը _16:00_

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Հ.Ղազարյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Ա.Ազատյան, Ն.Մարտիրոսյան, Ս.Շահվերդյան,Ա.Հակոբյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս.Ստեփանյան**

1. **<< Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին**

1.1 << Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված <<Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը>> (Հավելված 6.1), N 8 չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Վիկտոր Ռաֆիկի Ջլավյան>> Ա/Ձ-ի կողմից առաջարկվող բնութագիրը գնահատեց ոչ համարժեք պատվիրատուի կարիքներին,մասնավորապես՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չի կարող օգտագործվել համապատասխան սարքավորման բացակայության և արդեն իսկ եղած սարքավորումը անհիմն անգործության մատնելու օբյեկտիվ պատճառներից ելնելով:
Մասնակցին օրենքով սահմանված կարգով փաստաթղթերի ներկայացման պահանջ ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը (13.06.2018թ.) ծանուցվել է արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից 14.06.2018թ. ներկայացված պարզաբանմամբ նշվում է այն մասին, որ իր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի կարող համարժեք լինել << Թ 20 ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-2018/4/15/16/ՀԲ-1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 8-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ հրավերով սահմանվել է «Արյան մեջ գլյուկոզի մակարդակի որոշման թեսթ երիզ Ակկու-Չեք Պերֆորմա գլյուկոմետրի համար», իր կողմից առաջարկվել է «Ստրիպ ՍԱՏԵԼԻՏ Էքսպրես N50 Սատելլիտ Էքսպրես գլյուկոմետրի համար, և անհատույց տրամադրել Սատելլիտ Էքսպրես գլյուկոմետրեր՝ անհայտ քանակությամբ:
Հրավերով այլ արտադրության գլյուկոմետրների տրամադրման պահանջ չի սահմանվել, այլ սահմանվել է պատվիրատուի մոտ առկա գլյուկոմետրների օգտագործման համար անհրաժեշտ թեստերի ձեռքբերում:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի 5 դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

ա) <<Վիկտոր Ռաֆիկի Ջլավյան>> Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

բ) <<Վիկտոր Ռաֆիկի Ջլավյան>> Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխան արձանագրությունների հետ միասին ուղարկել լիազոր մարմին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

գ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել 8-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

դ) Ծանուցել N 8 չափաբաժնի մասով հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի երրորդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

2. **Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի նախագահ՝	_____ (ստորագրությունը)	**Հ.Ղազարյան**
Հանձնաժողովի անդամներ՝	_____ (ստորագրությունը)	**Ա.Ազատյան**
	_____ (ստորագրությունը)	**Ն.Մարտիրոսյան**
	_____ (ստորագրությունը)	**Ս.Շահվերդյան**
	_____ (ստորագրությունը)	**Ա.Հակոբյան**
Հանձնաժողովի քարտուղար՝	_____ (ստորագրությունը)	**Ս.Ստեփանյան**